



CENTERS FOR MEDICARE & MEDICAID SERVICES

# Առողջության պահպանումը Medicare-ի կանխարգելման ծառայությունները

**Ա**ռողջության պահպանման հեշտ և կարևոր եղանակը հիվանդության կանխարգելման և վաղ հայտնաբերման ծառայություններ ստանալն է: Հիվանդության կանխարգելման և վաղ հայտնաբերման ծառայությունները կարող են Ձեզ հետ պահել որոշ հիվանդություններ ձեռք բերելուց կամ կարող են օգնել Ձեզ վաղ հայտնաբերել առողջական խնդիրները, երբ բուժումն առավել արդյունավետ է: Խոսքը Ձեր բժշկի կամ բուժօժանդություն մատուցողի հետ, որպեսզի պարզեք, թե ինչ լրացուցիչ ստուգումների կամ ծառայությունների կարիք Դուք կարող է ունենաք և թե ինչ հաճախականությամբ է պետք դրանք իրականացնել՝ առողջ մնալու համար: Եթե Դուք ունեք Medicare Մաս Բ, Դուք կարող եք շատ կանխարգելիչ ծառայություններ ստանալ՝ առանց որևէ ծախս կատարելու:

## Տեղյա՞կ եք արդյոք, որ Medicare-ը հատուցում է այս կանխարգելիչ ծառայությունները

### Որովայնային աորտայի անևրիզմի համար զննումը

Մեկանգամյա ուլտրաձայնային զննում ռիսկային համարվող անձանց համար: Եթե Ձեր ընտանիքում եղել են որովայնային աորտայի անևրիզմի հիվանդության պատմություն ունեցող անձինք, կամ Դու 65-ից 75 տարեկան եք և Ձեր կյանքի ընթացքում ծխել եք առնվազն 100 ծխախոտ, Դուք գտնվում եք ռիսկային խմբում:

### Ալկոհոլի չարաշահման ուղղությամբ զննումը և խորհրդատվությունը

Medicare ծրագիրը տարեկան մեկ անգամ հատուցում է ալկոհոլի չարաշահման ուղղությամբ զննման հետ կապված ծախսերը Medicare ծրագրից օգտվող չափահասների (այդ թվում՝ հղի կանանց) համար՝ ալկոհոլի օգտագործումը չարաշահող, սակայն ալկոհոլից կախվածություն չունեցող անձանց հայտնաբերելու նպատակով: Եթե Ձեր զննման արդյունքները դրական են, ապա տարեկան կտրվածքով Դուք կարող եք իրավասու լինել չորս կարճատև խորհրդատվական հանդիպումների (եթե Դուք ունակ և զգոն եք խորհրդատվության ընթացքում): Որակավորված առաջնային բուժապասարկում տրամադրող բժիշկը կամ այլ առաջնային բուժապասարկում տրամադրող բուժաշխատողը պետք է խորհրդատվություն տրամադրի առաջնային բուժօգնություն տրամադրող հիմնարկում (օրինակ՝ բժշկի կաբինետում):

# Դուք տեղյակ եք, որ Medicare-ը հատուցում է այս կանխարգելիչ ծառայությունները: (շարունակություն)

## Սրտանոթային հիվանդությունը (վարքագծային թերապիա)

Medicare-ը կհատուցի Ձեր առաջնային խնամքի բժշկին ամենամյա մեկ այցելության հետ կապված ծախսերը՝ Ձեզ մոտ սրտանոթային հիվանդության վտանգը նվազեցնելու նպատակով: Այդ այցելության ընթացքում Ձեր բժիշկը կարող է քննարկել ասպիրինի օգտագործումը (անհրաժեշտության դեպքում), ստուգել Ձեր արյան ճնշումը և առաջարկել Ձեզ առողջ սնվելու համար հնարքներ:

## Սիրտանոթային հիվանդությունների ստուգումներ

Խնդրե՛ք Ձեր բժշկին ստուգել Ձեր խոլեստերինի, լիպիդի և տրիգլիցերիդի մակարդակները, ինչը կօգնի որոշել, թե արդյոք Ձեզ սպառնում է սրտամկանի ինֆարկտ կամ կաթված: Եթե Դուք գտնվում եք ռիսկային խմբում, ապա Դուք կարող եք ձեռնարկել որոշակի քայլեր այդ հիվանդագին վիճակները կանխարգելելու համար: Medicare-ը հատուցում է խոլեստերինի, լիպիդի և տրիգլիցերիդի մակարդակները որոշող ստուգումների ծախսերը յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ:

## Կոլոռեկտալ (հաստ աղիքի) քաղցկեղի համար գնումները

Այս ստուգումներն օգնում են կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերմանը, երբ բուժումն առավել արդյունավետ է: Եթե դուք 50 կամ ավելի տարեկան եք, կամ ենթարկվում եք կոլոռեկտալ քաղցկեղի ռիսկի, Medicare-ը ծածկույթի մեջ ընգրկում է այս հետազոտություններից մեկը կամ մի քանիսը՝ կղանքի թաքնված արյան հետազոտություն, ճկուն սիգմոիդոսկոպիա, սկրինինգային կոոլոնոսկոպիա, բարիումի հոգնա և կղանքի բազմաթիրախային ԴՆԹ հետազոտություն (ինչպես օրինակ՝ Cologuard™): Medicare-ի կողմից այս ստուգումների համար վճարման հաճախականությունը կախված է ստուգման տեսակից և Ձեզ համար՝ քաղցկեղի այս տեսակի վտանգավորության աստիճանից: Դուք և Ձեր բժիշկն եք որոշում, թե որ ստուգումն է Ձեզ համար ամենաարդյունավետը:

## Դեպրեսիայի համար գնում

Դեպրեսիայի (ընկճախտի) համար գնումը Medicare-ը մեկ տարվա ընթացքում հատուցում է դեպրեսիայի ուղղությամբ մեկ գնում Medicare ծրագրից օգտվող բոլոր անձանց՝ համար: Ստուգումը պետք է կատարվի առաջնային բուժօգնության կետում (օրինակ՝ բժշկի կաբինետում), որը կարող է ապահովել հետագա բուժմամբ և ուղեգրումով, եթե անհրաժեշտություն լինի:

## Շաքարախտի սկրինինգ

Medicare-ը հատուցում է շաքարախտի կամ նախաշաքարախտային վիճակի համար ստուգումների հետ կապված ծախսերը: Այս թեստերը հասանելի են, եթե Դուք ունեք հետևյալ ռիսկի գործոններից որևէ մեկը՝ արյան բարձր ճնշում, ոչ նորմալ խոլեստերինի և տրիգլիցերիդի մակարդակի (դիլիպիդեմիա) պատմություն, ճարպակալում կամ արյան մեջ շաքարի բարձր մակարդակի պատմություն: Ստուգումների հետ կապված ծախսերը հատուցվում են նաև, եթե ստորև ներկայացվածներից երկուսը կամ ավելին առնչվում են Ձեզ՝ 65 կամ ավելի բարձր տարիքի եք, գեր եք, ընտանիքում առկա է շաքարախտ հիվանդության պատմություն (ծնողներ, եղբայրներ, քույրեր), ունեցել եք հղիության շաքարախտի պատմություն (հղիության ընթացքում առաջացող շաքարախտ) կամ ծննդաբերել եք 9 ֆունտից ավելի քաշ ունեցող երեխա: Ելնելով այս ստուգումների արդյունքներից դուք կարող եք պայմանական կլինել տարին մինչև 2 գնման համար: Առավել մանրամասն տեղեկությունների համար գրուցեք Ձեր բժշկի հետ:

## Շաքարախտի ինքնակառավարման դասընթացը

Այս դասընթացը օգնում է Ձեզ սովորել ապրել շաքարախտի հետ և կառավարել այն: Այս ծրագիրը կարող է ներառել առողջ սնվելու, ակտիվ լինելու, արյան մեջ շաքարի պարունակությունը վերահսկելու, դեղամիջոցներն ընդունելու և ռիսկերը նվազեցնելու հնարներ: Դուք պետք է շաքարախտ ունենաք և ունենաք գրավոր պատվեր Ձեր բժշկի կամ այլ բուժապասարկում իրականացնողի կողմից:

## Գրիպի դեմ պատվաստումներ

Այս պատվաստումներն օգնում են կանխարգելել հարբուխը կամ գրիպի վիրուսը: Medicare-ը հատուցում է այս ներարկումները յուրաքանչյուր գրիպի սեզոնի համար մեկական անգամ:

## Գլաուկոմայի ստուգումները

Այս ստուգումներն օգնում են հայտնաբերել գլաուկոմա աչքի հիվանդությունը: Medicare-ը հատուցում է այս ստուգումների հետ կապված ծախսերը յուրաքանչյուր 12 ամիսը մեկ անգամ գլաուկոմայի բարձր ռիսկային խմբում գտնվող անձանց համար:

## Հեպատիտ «B»-ի դեմ պատվաստումներ

Ներարկումների այս շարքը պաշտպանում է մարդկանց Հեպատիտ B-ով վարակվելուց: Medicare-ը հատուցում է այս ներարկումները Հեպատիտ B-ով վարակվելու միջին կամ բարձր ռիսկ ունեցող մարդկանց համար:

## Հեպատիտ B վիրուսով (HBV) վարակի ստուգում

Medicare-ը փոխհատուցում է HBV վարակի ստուգումը, եթե Դուք HBV վարակ ունենալու բարձր ռիսկային խմբում եք կամ հղի եք: Medicare-ը հատուցում է այս ստուգումները միայն այն դեպքում, երբ դրանք պատվիրված են առաջնային բուժապասարկում իրականացնողի կողմից: HBV վարակի հետազոտումները հատուցվում են տարեկան կտրվածքով, միայն շարունակական բարձր ռիսկի խմբում գտնվողների համար, ովքեր Հեպատիտ B-ի պատվաստում չեն ստանում: Իսկ հղի կանանց դեպքում՝ յուրաքանչյուր հղիության վարման առաջին այցելության ժամանակ, նոր կամ շաունակական ռիսկի խմբում գտնվողների համար ծննդաբերության ժամանակ, հաջորդ հղիությունների վարման առաջին այցելության ժամանակ, նույնիսկ եթե նրանք նախկինում ստացել են Հեպատիտ B-ի դեմ պատվաստումը կամ HBV հետազոտման բացասական արդյունք են ունեցել:

## Հեպատիտ «C»-ի համար զննումը

Medicare-ը հատուցում է հեպատիտ «C»-ի համար զննման նպատակով մեկանգամյա ստուգման հետ կապված ծախսերը 1945-ից 1965 թվականներին ծնված անձանց համար: Medicare-ը նաև հատուցում է պարբերաբար իրականացվող ամենամյա զննման հետ կապված ծախսերը որոշ այնպիսի անձանց համար, որոնք շարունակում են դրսևորել բարձր ռիսկային վարքագիծ: Medicare-ից օգտվող այն անձինք, ովքեր գտնվում են բարձր ռիսկային խմբում, բավարարում են հետևյալ պայմաններից առնվազն մեկը. ունեն ներերակային ներարկման դեղերի անօրինական օգտագործման պատմություն ներկայումս կամ անցյալում կամ կատարել են արյան փոխներարկում նախքան 1992 թվականը:

## Ոսկրային զանգվածի որոշումը

Այս ստուգումներն օգնում են որոշել, թե արդյոք Ձեզ սպառնում է ոսկրերի կտրվածք: Medicare-ը հատուցում է այս ստուգումները 24 ամիսը մեկ (ավելի հաճախ, եթե կա բժշկական ցուցում)՝ օստեոպորոզի ռիսկի ենթարկված որոշակի մարդկանց համար:

# Դուք տեղյակ եք, որ Medicare-ը հատուցում է այս կանխարգելիչ ծառայությունները: (շարունակություն)

## ՄԻԱՎ-ի համար գնումը

Medicare-ը հատուցում է ՄԻԱՎ-ի (Մարդու ինունային անբավարարության վիրուս) ստուգումները, եթե Դուք 15-65 տարեկան եք, ռիսկային խմբում չեք և դիմում եք ստուգման համար, կամ եթե 15 տարեկանից փոքր եք կամ 65-ից մեծ, գտնվում եք բարձր ռիսկային խմբում և դիմում եք ստուգման համար: Medicare-ը հատուցում է այս ստուգման ծախսերը յուրաքանչյուր 12 ամիսը մեկ անգամ կամ 3 անգամ յուրաքանչյուր հղիության ընթացքում:

## Թոքերը քաղցկեղի ստուգման թեստ

Medicare-ը հատուցում է ցածր դոզայով համակարգչային շերտագրումով ստուգման ծախսերը (ՑԴՀՇ), եթե Դուք բավարարում եք հետևյալ բոլոր պահանջներին՝ տարիքը՝ 55-77, ներկայումս ծխող եք կամ դադարել եք ծխելը վերջին 15 տարվա ընթացքում, ունեք առնվազն 30 «տուփով տարիներ» (վիջինում օրական 1 տուփ՝ 30 տարվա ընթացքում) ծխախոտ ծխելու պատմություն և ունեք գրավոր դիմում Ձեր բժշկի կամ որակավորում ունեցող այլ բուժաշխատողի կողմից: Ձեր առաջին թոքի հետազոտությունից առաջ ձեզ հարկավոր է հանդիպում նշանակել ձեր բժշկի հետ՝ քննարկելու համար թոքերի քաղցկեղի սկրինինգային ստուգման ռիսկերը: Դուք և Ձեր բժիշկը կարող եք որոշել, թե արդյոք թոքի քաղցկեղի գնումն իսկապես անհրաժեշտ է Ձեզ:

## Մամոգրաֆիկ գնումը (կրծքի քաղցկեղի գնում)

Medicare-ը հատուցում է մամոգրաֆիկ գնման հետ կապված ծախսերը յուրաքանչյուր 12 ամիսը մեկ անգամ 40 կամ ավելի բարձր տարիքի կանանց համար: Medicare-ը նաև հատուցում է մեկ առաջնային մամոգրաֆիկ գնման ծախսերը 35-39 տարեկան կանանց համար:

## Բժշկական սննդային թերապիայի ծառայությունները

Հնարավոր է, որ Medicare-ը կարող է հատուցել բժշկական սննդի թերապիան և որոշակի կապակցված ծառայություններ կամ եթե դուք երիկամի փոխպատվաստում եք ունեցել վերջին 36 ամսվա մեջ և ձեր բժիշկը կամ այլ ոչ որակավորված բժիշկը ուղեգրում է ձեզ այդ ծառայությանը:

## Medicare-ի շաքարախտի կանխարգելման ծրագիր

Եթե Դուք ունեք Medicare Մաս Բ, ունեք նախաշաքարախտային վիճակ և բավարարում եք մյուս չափանիշներին, Medicare-ը հատուցում է ողջ կյանքի ընթացքում մեկ անգամյա առողջապահական վարքագծի փոփոխության ծրագրի ծախսերը՝ 2-րդ տիպի շաքարախտը կանխելու հարցում Ձեզ օգնելու համար: Այս ծրագիրն սկսվում է առնվազն 16 հիմնական պարապմունքներով խմբային միջավայրում, 6 ամսյա ժամանակահատվածի ընթացքում: Հիմնական դասերից հետո Դուք կարող է լրացուցիչ ամսական պարապմունքների իրավունք ունենաք՝ առողջ սովորույթները պահպանելու հարցում Ձեզ օգնելու համար:

## Գիրության համար գնումը և խորհրդատվությունը

Եթե Ձեր մարմնի զանգվածի ինդեքսը 30 կամ ավելի է, Medicare-ը հատուցում է վարքային թերապիայի դասերի ծախսերը՝ Ձեզ քաշ կորցնելու հարցում օգնելու համար: Այս խորհրդատվությունը կարող է հատուցվել, եթե Դուք այն ստանում եք առաջնային բուժօգնության կետում (օրինակ՝ բժշկի կաբինետում), որտեղ այն կարող է համակարգվել Ձեզ տրամադրվող այլ խնամքի և անհատական կանխարգելման պլանի հետ:

## **Pap ստուգում և հեշտոցային հետազոտություն (նաև ներառում է կրծքագեղձերի հետազոտություն)**

Այս լաբորատոր հետազոտությունները և ստուգումները ուսումնասիրում են վզիկի և հեշտոցի քաղցկեղների առկայությունը: Medicare-ը հատուցում է այս թեստերի և հետազոտությունների հետ կապված ծախսերը բոլոր կանանց պարագայում 24 ամիսը մեկ անգամ և բարձր ռիսկային խմբում գտնվող անձանց համար՝ 12 ամիսը մեկ անգամ: Medicare-ը նաև հատուցում է Human Papillomavirus (HPV) ստուգումները (երբ դրանք տրամադրվում են Pap ստուգման հետ միասին) 5 տարին մեկ անգամ, եթե դուք 30-65 տարեկան եք և ունեք ՄՊՎ ախտանշաններ:

## **Պնևմակոկային վարակի դեմ պատվաստումները**

Medicare-ը փոխհատուցում է պնևմակոկային վարակի դեմ պատվաստումները՝ օգնելու համար կանխարգելել պնևմակոկային վարակները (թոքաբորբի որոշակի տեսակները): Medicare-ը նաև փոխհատուցում է մյուս երկրորդ պատվաստումը, եթե այն տրամադրվում է տարին մեկ (կամ ավելի հազվադեպ)՝ առաջին պատվաստումից հետո: Զրուցե՛ք Ձեր բժշկի կամ առողջապահական ծառայություն մատուցող մասնագետի հետ, որպեսզի պարզեք, թե արդյոք Ձեզ անհրաժեշտ են այս պատվաստումները:

## **Կանխարգելիչ այցելությունները**

**Մեկանգամյա «Բարի գալուստ Medicare» կանխարգելիչ այցելություն:** Medicare-ը հատուցում է Ձեր առողջության ընդհանուր գնահատման և կանխարգելիչ ծառայությունների ուղղությամբ կրթության ու խորհրդատվության, այդ թվում՝ որոշակի գնումների, պատվաստումների, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, այլ ծառայությունների համար ուղեգրումների համար: Medicare-ը հատուցում է այս այցելության համար միայն Medicare-ի «Բ» մասով (Բժշկական ապահովագրություն) տրամադրվող ապահովագրական ծածկույթի առաջին 12 ամիսների ընթացքում:

**Տարեկան «Բարեկեցության ապահովման» այցելություն:** Եթե Դուք օգտվում եք Medicare-ի «B» մասից 12 ամսից ավելի, ապա Ձեզ տրվում է բարեկեցության նպատակով ամենամյա այցելության հնարավորություն՝ Ձեր ներկայիս առողջության վիճակի և ռիսկային գործոնների հիման վրա անհատականացված կանխարգելիչ պլան մշակելու կամ թարմացնելու համար: Medicare-ը հատուցում է այս այցելության համար յուրաքանչյուր 12 ամիսը մեկ անգամ:

## **Շագանակագեղձի քաղցկեղի համար գնումները**

Այս ստուգումներն օգնում են շագանակագեղձի քաղցկեղի հայտնաբերմանը: Medicare-ը հատուցում է հետանցքից (ռեկտալ) թվային հետազոտության և շագանակագեղձի սպեցիֆիկ հակազենի (PSA) լաբորատոր ստուգման հետ կապված ծախսերը յուրաքանչյուր 12 ամիսը մեկ անգամ Medicare ունեցող, 50 տարեկանից բարձր տարիքի բոլոր տղամարդկանց համար (ապահովագրական ծածկույթն ուժի մեջ է մտնում Ձեր 50-րդ ծննդյան օրվանից):

**Այս գնումների հետ կապված ծախսերը հատուցվում են Medicare ծրագրից օգտվող այն անձանց համար, որոնք հղի են և (կամ) գտնվում են սեռական ճանապարհով փոխանցվող ինֆեկցիաների առումով առավել բարձր ռիսկային խմբում այն պարագայում, երբ ստուգումները ցուցված են առաջնային խնամք տրամադրող մասնագետի կողմից:**

Medicare-ը հատուցում է սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (ՄՎ) ստուգումները խլամիդիայի, գոնորեայի, սիֆիլիսի և շեպատիտ Բ-ի համար: Այս ստուգումները հատուցվում են Medicare ունեցող հղիների, ինչպես նաև որոշակի անձանց համար, որոնք ՄՎ

## Դուք տեղյակ եք, որ Medicare-ը հատուցում է այս կանխարգելիչ ծառայությունները: (շարունակություն)

ունենալու բարձր ռիսկային խմբում են, եթե այս թեստերը պատվիրված են առաջնային բուժօգնության բժշկի կամ այլ առաջնային բուժօգնություն տրամադրողի կողմից: Medicare-ը հատուցում է այս ստուգման ծախսերը յուրաքանչյուր 12 ամիսը մեկ անգամ կամ 3 անգամ յուրաքանչյուր հղիության ընթացքում: Medicare նաև հատուցում է տարեկան մինչև 2 անհատական 20 կամ 30 րոպեանոց դեմ առ դեմ բարձր ինտենսիվությամբ վարքային խորհրդատվական պարապմունքների ծախսերը սեռապես ակտիվ չափահաս մարդկանց համար, ովքեր գտնվում են սեռավարակ ունենալու բարձր ռիսկային խմբում: Medicare-ը կհատուցի այս խորհրդատվական սեանսները, միայն եթե դրանք տրամադրվում են առաջնային խնամքի ծառայությունների մատակարարի կողմից և տեղի են ունենում առաջնային խնամքի ծառայությունների պայմաններում՝ ինչպես օրինակ բժշկի գրասենյակը: Ստացիոնար պայմաններում, ինչպես օրինակ՝ պրոֆեսիոնալ խնամքի հաստատությունում, իրականացված խորհրդատվությունը չի հատուցվի որպես կանխարգելման նպաստ:

## Ծխելը և ծխախոտի օգտագործումը դադարեցնելը (խորհրդատվություն՝ ծխելը կամ ծխախոտ պարունակող ապրանքների օգտագործումը դադարեցնելու համար)

Medicare-ը հատուցում է 12-ամսյա ժամանակահատվածում մինչև 8 դեմ առ դեմ այցելությունները: Medicare ունեցող ծխախոտ օգտագործող բոլոր անձինք ապահովագրված են: Այս այցելությունները պետք է ապահովվեն որակավորում ունեցող բժշկի կամ Medicare-ի կողմից հաստատված ծառայություն մատուցողի կողմից:



## Որքան եք Դուք վճարում

Բազմաթիվ կանխարգելիչ ծառայությունների համար Դուք ոչինչ չեք վճարելու, եթե Դուք ստանաք այդ ծառայությունները որակավորված բժշկից կամ առողջապահական ծառայություններ մատուցող այլ մասնագետից, ով ընդունում է հանձնարարականը: Որոշ կանխարգելիչ ծառայությունների համար Ձեզնից կարող է պահանջվել վճարել չհատուցվող գումար, համաապահովագրություն և (կամ) համավճար: Այս գումարների չափը տարբերվում է՝ ըստ Ձեզ անհրաժեշտ ծառայությունների տեսակի և Ձեր ունեցած Medicare ծրագրով առաջարկվող առողջապահական պլանի տեսակի:

## Առավել մանրամասն տեղեկությունների համար

Այս կանխարգելիչ ծառայությունների համար Medicare-ի կողմից փոխհատուցման մասին առավել մանրամասներ ստանալու համար, ներառյալ՝ Ձեր Հիմնական Medicare-ի ծախսերը, այցելեք [Medicare.gov/publications](https://www.medicare.gov/publications) կայքը՝ to «Medicare-ի կանխարգելիչ ծառայությունների Ձեր ուղեցույցը» նայելու կամ տպելու համար: Կամ զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով և խնդրե՛ք մի օրինակ: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:

Դուք կարող եք նաև գրանցվել [MyMedicare.gov](https://www.mymedicare.gov) կայքում՝ Ձեր կանխարգելիչ առողջապահական տեղեկատվությանը յուրաքանչյուր օր 24 ժամ անմիջական մուտք ունենալու համար: Դուք կարող եք հետևել Ձեր հասանելիք կանխարգելիչ ծառայություններին, ստանալ Medicare-ի կողմից հատուցվող՝ Ձեզ հասանելի ստուգումների և գնումների երկու տարվա օրացույցը և տպել Ձեր անհատականացված «աշխատանքային» զեկույցը բժշկի հետ Ձեր հաջորդ հանդիպմանը տանելու համար:



Դուք իրավունք ունեք Medicare-ի մասին տեղեկություններ ստանալ մատչելի տարբերակով, օրինակ՝ մեծ տպագրությամբ, Բրայլյան կամ աուդիո տարբերակներով: Դուք նաև իրավունք ունեք բողոք ներկայացնելու, եթե կարծում եք, որ ձեր նկատմամբ խտրականություն է կիրառվել: Այցելեք [Medicare.gov/about-us/nondiscrimination/accessibility-nondiscrimination.html](https://www.medicare.gov/about-us/nondiscrimination/accessibility-nondiscrimination.html), կամ զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227)՝ ավելի շատ տեղեկություններ ստանալու համար: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:

Վճարված է Առողջապահության և սոցիալական ծառայությունների  
դեպարտամենտի կողմից: